ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 62Լ

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերի համաձայն

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանության իրավասու ծառայողների վերապատրաստում անցնելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և գործում է մինչև «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ծառայողների և աշխատակիցների վերապատրաստում անցնելու կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանն ուժի մեջ մտնելը:

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

«21» 11 2023թ.
ք. Երևան

Հավելված

Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«21» 11 2023թ.
թիվ 62-Լ հրամանի

ԿԱՐԳԸ

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հրամանով սահմանվում է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանության իրավասու ծառայողների վերապատրաստում (այսուհետ՝ վերապատրաստում) անցնելու կարգը:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ստորաբաժանումների ղեկավարները պատասխանատու են վերապատրաստման աշխատանքներն արդյունավետ և որակյալ կազմակերպելու համար:

3. Վերապատրաստման կազմակերպման մեթոդական ղեկավարումը և վերահսկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կադրային քաղաքականության վարչության կողմից:

4. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ստորաբաժանումներում վերապատրաստման կազմակերպումը և մեթոդական ապահովումն իրականացնում է տվյալ ստորաբաժանումում կադրային ապարատի կամ կադրային աշխատանքների համար պատասխանատու ծառայողի /աշխատակցի/ կողմից:

2. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Վերապատրաստում կազմակերպելու նպատակով ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների կադրային ապարատի ծառայողների կամ կադրային աշխատանքների համար պատասխանատու ծառայողի /աշխատակցի/ կողմից կադրային քաղաքականության վարչության պահանջով կազմվում են վերապատրաստման ենթակա ոստիկանության իրավասու ծառայողների /այսուհետ՝ ծառայողների/ ցուցակները և ներկայացվում են կադրային քաղաքականության վարչություն՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ – ներքին գործերի նախարարի տեղակալի հրամանով վերապատրաստման ժամանակացույցը հաստատելու համար:

6.Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված հրամանով հաստատվում է նաև ուսումնական հաստատությունը, որտեղ անցկացվելու են վերապատրաստման դասընթացները, սահմանվում են վերապատրաստման ենթակա ծառայողների թվաքանակը, ուսումնական խմբի նվազագույն քանակը և ուսուցման ժամկետները:

7. Վերապատրաստում անցնող ծառայողների համար ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչների թեմաների ուսուցման ժամկետները, բովանդակությունը որոշվում են ուսումնական պլաններով ու առարկայական ծրագրերով, որոնք մշակում է համապատասխան ուսումնական հաստատությունը՝ ոստիկանության շահագրգիռ ստորաբաժանումների հետ համատեղ:

8. Վերապատրաստման ուսումնական պլանները հաստատվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալի կողմից, իսկ վերապատրաստման առարկայական ծրագրերը՝ ոստիկանության ուսումնական հաստատության ղեկավարի կողմից:

9. Վերապատրաստման գործուղվող ծառայողի հետ մինչև ուսումնական հաստատություն գործուղելը կնքվում է վերապատրաստման համար պետության կատարած ծախսերի փոխհատուցման պայմանագիր՝ ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի թիվ 111-Ն որոշման համաձայն:

10. Վերապատրաստում չեն անցնում՝

1) այն ծառայողները, որոնք հեռակա ուսուցման ձևով սովորում են ասպիրանտուրայում, դոկտորանտուրայում, ներքին գործերի նախարարության ուսումնական հաստատություններում.

2) այն ծառայողները, որոնց ոստիկանությունում ծառայության սահմանային տարիքը լրանալուն մնացել է 3 տարվանից պակաս ժամանակ.

3) այն կին ծառայողները, որոնք ունեն մինչև 3 տարեկան երեխա:

3. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

11. Վերապատրաստման դասընթացներն ավարտած ծառայողին տրվում է սահմանված նմուշի վկայական, որի ձևը հաստատված է ՀՀ ոստիկանության պետի 18.04.2003թ. թիվ 380-Ա հրամանով:

12. Վերապատրաստման դասընթացների բացասական արդյունքների դեպքում ծառայողի լրացուցիչ վերապատրաստման դասընթացին մասնակցելու, զբաղեցրած պաշտոնում հետագա ծառայությունը շարունակելու նպատակահարմարության կամ այլ ծառայություն տեղափոխման հարցը քննարկվում է ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից, կառուցվածքային ստորաբաժանման պետի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա:

13. Վերապատրաստման դասընթացները հաշվառվում եմ ատեստատով, հաշվառման մատյանով և էլեկտրոնային եղանակով՝ «Կադրեր» ինֆորմացիոն համակարգի միջոցով: